

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2012թ. հունվարի 17-19ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Հռոմում (Իտալիա) կայացած «Պարենի և պարենային ապահովվածության մասին տեղեկատվություն. հուսալի գնահատումից մինչև արդյաունավետ քաղաքականության մշակում» խորագրով միջազգային գիտաժողովին,
- ✓ 2012թ. փետրվարի 19-23ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Օբոյանցևը և արդյունաբերության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Կ. Անտոնյանը մասնակցել են ք. Անկարայում (Թուրքիա) կայացած «Սեզոնային ճշգրտումներ» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2012թ. փետրվարի 20-21ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը մասնակցել է ք. Հռոմում (Իտալիա) կայացած «Կնոջ և ընտանիքի դերը գյուղական բնակավայրերի զարգացման գործում» խորագրով 22-րդ փորձագիտական հանդիպմանը,
- ✓ 2012թ. փետրվարի 20-24ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ Մ. Երիցյանը և Գ. Պետրոսյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած 2011թ. տվյալներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում միջազգային համադրումների աշխատանքների իրականացման նպատակով աշխատանքային քննարկումներին,
- ✓ 2012թ. փետրվարի 28-ից - մարտի 2-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են Նյու Յորքում (ԱՄՆ) կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 43-րդ նստաշրջանին: